«Ֆիզիկական դաստիարակություն և ադապտիվ ֆիզիկական կուլտուրա» կրթական ծրագիր

«Ֆիզիկական դաստիարակություն և ադապտիվ ֆիզիկական կուլտուրա» կրթական ծրագրի նպատակը բարձր որակավորում ունեցող մասնագետների պատրաստումն է: Ուսուցման գործընթացում իրականացվում և շեշտադրվում է կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող անձանց կրթության, ֆիզիկական դաստիարակության և վերականգման ժամանակակից մոտեցումներն ու նրա մեթոդաբանության կատարելագործման հիմնախնդիրները: Կրթական ծրագիրը հնարավորություն է տալիս ընդլայնել ակադեմիական մասնագիտական գիտելիքները, զարգացնել կարողություններ, հմտություններ և ձևավորել մասնագիտական կարողունակություններ՝ ֆիզիկական դաստիարակության և ադապտիվ ֆիզիկական կուլտուրայի բնագավառում: Մագիստրոսական կրթական ծրագիրը կազմված է տեսական և գործնական բազային մասնագիտական թեմաներից՝ ներառելով բարձր մակարդակի գիտահետազոտական և գիտամանկավարժական պրակտիկաներ, գիտական հետազոտություններ:

«Ֆիզիկական դաստիարակություն և ադապտիվ ֆիզիկական կուլտուրա» կրթական ծրագիրը յուրացրած մագիստրոսը կարող է աշխատել՝ հանրակրթական դպրոցում որպես ֆիզիկական կուլտուրայի ուսուցիչ, մանկատներում, ներառական և հատուկ /օժանդակ/ կրթական հաստատություններում՝ որպես մանկավարժ, հասարակական կազմակերպություններում, կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող անձանց համար նախատեսված հաստատություններում, բուժական վերականգնողական հիմնարկներում, առողջարաններում՝ որպես մեթոդիստ հրահանգիչ, բարձրագույն ուսումնական հաստատություններում՝ որպես դասախոս, կրթության համակարգում՝ որպես գիտական աշխատող: